


ՏՆՕՐԷՆ-ԽՄՐԱԳԻՐ
Ն. ՓՈՐՈՍԵԱՆ

ՀԱՄԱԿ ԿԱՐ ՈՐ ԵՒ ԳՈՒԹՈՒՆ
ՊԵՏԻ ԵՒ ՈՐՂՆԵՆ ԿԱՐ
Խմբագր. ԱՐՇԱԼՈՒՅՍ ԼՐԱԳՐԻ
ԳԱՀԻՐԷ (Հասպոպոլիս)

Rédaction du journal arménien
ARCHALOUICE
HABBANIEH LE CAIRE (ÉGYPTÉ)



ԼՐԱԳՐԻ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ԵԳՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐ	
Տարեկան, ողջ դասկն.	60
Վեցամսեայ »	35
ՕՏՈՒ ԵՐԿՈՒՆԵՐ	
Տարեկան Ֆրանկ	20
Վեցամսեայ »	12

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐԻՆԸ ԿԱՆԵԿ Է
ԵՒ ԹՂԹԱՏԱՐԻ ԾԱԽԲԸ
ԽՄԲԱԳՐՈՒՔԵԱՆԱ ՎՐԱՅ:

Խմբագրութեանս ուղղուած
գրութիւնք ԵՍ չ'են սրուիր:

ԱԶԳԱՊԱՏԱԿԱՆ ԿԱՆՈՒԱԾՆԵՐ

Ազգ. քառանգրիայէ մեր յարգելի թըլ-
թակիցներէն մէկուն գրածին նայելով, տեղ-
ւոյն մէջ երուսաղէսմապատկան հոգերը հե-
տըհետէ աճուրդով կը վաճառուին:

Գոնէ առ այժմ բոլորովին մեզի ան-
ժանօթ է թէ՛ այդպիսի կարեւոր կալուած
մը յանկարծ ի վաճառ հանուելու շարժա-
ռիթը ի՞նչ կրնայ եղած ըլլալ. և թէ ա-
նոնք՝ որ զայն ծախել սրոշած են, արդեօք
խսկապէս երուսաղէսին օգուտ մը կամ բա-
րիք մը առաջ բերելու նպատակաւ կ'ը-
նեն այդ բանը, թէ ինչ ինչ անձանօթ
պատճառներէ թեղադրուած են:

Ժամանակ եղած է, որ երուսաղէսի Ա-
թոռը մեծագումար և անտանելի պարտ-
քերու տակ հեծելով հանդերձ, Պատրի-
արքներու և Վարչութեանց կողմէ նկատու-
ողութեան առնուած չէ՛ թէ այս ու այն տեղ
գտնուած պատկառելի քանակութեամբ
կալուածներուն վրայ պէտք եղած հսկողու-
թիւնը երբեք ի գործ չ'դրուիր. և՛ կա՛մ
անսիրտ ու անխիղճ մարդոց ձեռքով կը
վատնուին անոնց հասոյթները, կամ ան-
խնամ ու երեսի վրայ ձգուելով կը փճա-
նան ու կ'ոչնչանան:

Եսայի պատրիարք եղաւ առաջինը՝ որ
պարտքերու ծանրութիւնը և միւս կողմա-
նէ ալ երուսաղէսմապատկան կալուածոց յո-
ռի մատակարարութիւնը աչքի առչել բե-
րելով, ջանքեր ըրաւ վերջ մը դնել այս
անբարեկարգ վիճակին և 1866 թուակա-
նին Տիգրանակերտցի Յակոբ Եպիսկոպոսին
ձեռքը շրջաբերական կոնդակ մը թխելով
զրկեց Հայաստանի գաւառներն, որպէս զի
Ս. Տեղեաց կալուածներուն հոգ տանի,
ընտելութիւններ կատարէ և արդիւնքը իրեն
հաղորդէ:

Եսայի Պատրիարքին օրովն էր գարձ-
եալ, որ գաւառներու մէջ արդէն չափազանց
ծանրացած զինուորական տրոց վրայ մարդ-
գլուխ երեքական զուրուշի յաւելումը եղաւ
երուսաղէսի պարտքը վճարելու անունով.
բայց կը կարծենք թէ մինչև ց'այսօր այդ
գումարները կը գանձուին ո՛չ ի հաշիւ Ե-
րուսաղէսի, այլ ի հաշիւ յատակը ծակ սըն-
տուկի մը

Երբ երուսաղէսմապատկան կալուած մը
այսօր Ազգ. քառանգրիայ մէջ աճուրդի կը հան-

ուի, մեր մտքին առջեւ կը ներկայանայ
Սիօնի մէջ հրատարակուած Եսայի Պատրի-
արքին վերոյիշեալ շրջաբերական կոնդակին
մի քանի հատուածներն, որոնցմէ մին ահա-
ւասիկ:

«Որովհետև միմիայն գանձանակի ար-
«գիւնքով չ'կրնար կառավարուիլ Ս. Ա-
«թոռս և միաբանութիւնս, որ կարգեալ է ի
«կողմանէ ազգին ի պահպանութիւն սրբա-
«զան տեղեաց, վասն որոյ բարեպաշտ Ժո-
«ղովրդոց մէջէն ոմանք շերմեռանդ սիրով
«իրենց գոյքը կամ անշարժ ստացուածքը
«Ս. Աթոռոյս թողուցած են կտակաւ որոնք
«եթէ խնամով նայուելու ըլլան, թէ՛ յիշա-
«սակ ընտրաց անուեր անտուաց կը մնայ
«և թէ Ս. Աթոռս բաւական կ'արդիւնա-
ւորի . . . »:

Չենք գիտեր թէ Եսայի Պատրիարքին
այս շրջաբերական կոնդակը ի՞նչ արդիւնք
արտադրած է այն առեւտներն, սակայն շատ
գիւրիւն է եզրակացնել թէ Յակոբ Եպիս-
կոպոսին այցելութիւնքն ի Հայաստան բո-
լորովին ապարդիւն պէտք է եղած ըլլան
և կալուածներն ալ ց'այսօր մնացած ա՛յն
վիճակին մէջ ինչ որ էին:

Հիմակ վերադառնանք Ազգ. քառանգրիոյ
կալուածավաճառներուն և հարցնենք թէ՛
այդ կալուածը ծախուելէն վերջ, ըստ Ե-
սայի Պատրիարքի կոնդակին յիշատակ ընտ-
րաց անուեր անտուաց պիտի մնա՞յ. թէ՛ ի
դպրութեան կենաց արձանագրուած է ը-
սելով պիտի ծախուի և անգամ մ'ալ չպի-
տի յիշուի ո՛չ կալուածին, ո՛չ յիշատակ ը-
նողին և ոչ ալ ծախողներուն անունները:

Մենք ա՛յնպէս գիտենք թէ, ազգա-
պատկան կալուածներն ո՛չ աճուրդով և ո՛չ
ալ նորագործող կրնան վաճառուիլ, եթէ
շատ ստիպողական պատճառ մը չ'գտնուիր
մէջ տեղը. հասկա աւելի կոկելու, բարե-
զարգելու և արդիւնաբեր վիճակի մը վե-
րածելու հոգածութիւն և ջանք չ'ինսպուիր
անոնց համար. մանաւանդ թէ՛ Գահիրէի և
Ազգ. քառանգրիոյ մէջ հիմակ ամենէն շատ փըն-
տուած բաներն Գրէտի Փօնտիլի թղթերէն
աւելի անշարժ կալուածներն են. ինչո՞ւ մենք
մեր ունեցածները ծախենք փոխանակ նորեր
դնելու և անոնց հասոյթներէն օգտուելու.
միթէ միջոցնե՞ր կը պակսին:

Երբ Ազգ. քառանգրիոյ այս առուծախի
լուրերը կը հասնին մեր ականջին, Գահիրէի
երուսաղէսմապատկան արեւակներն ալ իրենց

խոշոր քարերովը, աւերեալ պատերուն մէ-
ջէն դուրս ցցուած փայտերովը և մանա-
ւանդ իրենց անփառունակ գործակարտի
մեր աչքին առջեւ կը ներկայանան ամենայն
տղեղութեամբ:

Գահիրէի երուսաղէսմապատկան աւե-
րակ կալուածներուն վրայ առաջիկային
մասնաւորապէս համաւօտ տեսութիւններ
պարզելով, կը յուսանք թէ պէտք եղածէն
աւելի օգտակար պիտի կրնանք ըլլալ որ-
պէս զի ուրիշ տեղերու ազգապատկան կալ-
ուածներն ալ գոնէ յետ այսու ազատին
փճանալու վտանգին ենթակայ ըլլալէ:

ՆԵՂՍՈՒՆ

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆ ՀԱՆԴԵՐՁԵԱԼ ԱԾԽԱՐԿԷ

Կացութիւնը կը ծանրանայ:
Ազգու միջոցներ ձեռք կ'առնուին:
Տեսակցութիւն մը ներսու Պա-
րիարքի հետ:

Թայմը իւր վերջի խմբագրականներէն միոյն
մէջ վերապահութեամբ հետեւեալը հրատարա-
կած է.

«Մեր ստացած կէս-պաշտօնական տեղեկու-
թեանց յենլով ներսէս Արքեպիսկոպոս(») այս
«պահուս հովուական պտոյտի մը կայծ է իւր թե-
«մին մէջ: Այս յանկարծական պտոյտ կարգ մը
«մեկնութեանց տեղի կուտայ. դիւանագրտական
«չըջանակաց մէջ պտտած գրոյցի մը նայելով
«ասիկայ կապ ունի եղեր Եպիսկոպոսի Հայոց Ա-
«ռաջնորդարանի կարգ մը խնդրոցը հետ, ի մաս-
«նաւորի Մարմինայի խնդրոյն»:

Իհրէսայլ Ֆօլս քիլիկեանի կենցախի մէջ հե-
ռագիրը՝ հոգիներու քաղաքէն քաղաք, աւելի
կարեւոր եւ ցնցող լուրեր կը բերեն. ի միջի այ-
լոց կ'ըսէ թէ՛ դատական իշխանութեան միջնոր-
դութիւնը կարեւոր սեփուած է:

Կը փափաքէի ներսէս Պատրիարքի հետ տե-
սակցութիւն մը ունենալ օրուան խնդրոց վերայ
իւր կարծիքը առնելու համար: Վերջերս երբ հե-
ռագիրը ու թայմը կ'իմացունէին Սրբազանին հով-
ուական պտոյտը, փութացի օգտուիլ առիթէն:
Երկաթուղւոյ ընկերութիւնը գիւրութիւն մը տա-
լու համար ճամբորդաց՝ բացառաբար զեղջ մը ը-
բած էր իւր երթ ու դարձի (aller et retour)
գնոյն վերայ՝ որքան ժամանակ որ Սրբազանը
մնար հոգիներու քաղաքը:

Ժամը առաւօտեան ինն է. փութկոտ քայլե-
րով կը դիմեմ դէպ ի կայարան, տոմսակս կ'առ-
նեմ. հինգ վայրկեան վերջ արդէն ճամբայ ելած
ենք: Ճամբորդութիւնը անորոշելի էր, մանաւանդ

(») Հանդուցեալ Պատրիարքը ակնարկել կ'ուզէ:

Place de femmes charmantes/ երկայնքը՝ ուր մարդ ստէպ կը հանդիպի զգլխիչ եւ . . . զթացող կին-հոգիներու — կամ զթուրեան քոյրերու, ինչպէս որ կ'ուզէ: — «Բլաա»էն մէկ ժամ յետոյ քաղաք կը հասնինք:

Սրբազանին հասցէն թէպէտ չունէի քովս, բայց ո՛ր եւ է զժուարութիւն չի կրեցի, որովհետեւ հոգիներու այդ քաղքին մէջ ոչ միայն մեռեալները՝ այլ նոյն իսկ քարերը կը խօսէին:

Վերջերս ընդունուած նոր օրէնքի մը համաձայն՝ Պատրիարքներէն անոնք՝ որք խղճի մտօք կը կատարեն իրենց պաշտօնը, ի վարձատրութիւն իրենց բարօք պաշտօնավարութեան, իրենց մանուանէ վերջ հանդերձեալ աշխարհին մէջ հոգիներու թեմեր կը յանձնուին հովուելու համար: Ներսէս Պատրիարքի ալ տրուած է հիւսիս-հարաւային բաժնի տեսչութիւնը:

Այս տեղեկութիւնները տալէ վերջ քաղաքին մասին, սաչափ ըսեմ թէ՛ հոգիներու այդ քաղաքը որ ընդհանրապէս հանդարտ է, վերջերս մեծ կենդանութիւն մը կը տրիէ երկի վերաբերեալ ներկայութեանը պատճառաւ, ոչք են՝ Ներսէս Պատրիարք, Նարպէյ եւ Ալէաթճեան Սրբազանք:

Տեղւոյն պաշտօնական օրկանը կ'ըսէ թէ՛ եւրից վերաբերեալ տեսակցութիւնը իւր ազգեցութիւնը պիտի ունենայ մէկէ աւելի կէտերու վերայ:

Պատրիարքին ընակարանը կը համարուի Երկայնահասակ մի երիտասարդ դուռը կը բանայ. կը հարցունեմ իրեն թէ Սրբազանը հո՞ն է:

Իւր հաստատական պատասխանին վերայ՝ այցեցումս կը յանձնեմ եւ քիչ յետոյ կը ներկայանամ Պատրիարքին՝ որոյ քով նստած են Նարպէյ եւ Ալէաթճեան Սրբազանք, որոնց առջինը Աչքբեան իւր երկրորդ Օրմանեանի հետ առկա մնացած կարգ մը հաշուոց մասին խորհրդակցութիւններ կ'ընէին եւ անոնց կարգադրութեանը համար մասնախումբ մը կը մտածէին կազմել:

Կը բարեւեմ գիրենք. —Աստուած օգնական —Աստուած պահպան եւ կ'սկսի խօսակցութիւնը տաք.

—Այլ ընդ այլոց գրոյցներ կը չըլին Սրբազանի այս պտոյտի մասին. գործիմակ, Թայլկ կ'ըսէ թէ Եգիպտոսի Առաջնորդարանին կարգ մը խնդրոց հետ ալ կապ ունի եղեր, այս ըսուածները ստոյգ են եւ ո՞ր աստիճան:

—Այո, ստոյգ են — կը պատասխանէ Պատրիարքը — կարգ մը գործեր կան, զորս կ'ուզեմ միանգամ ընդ միշտ կարգադրել. նախ Մարմինայի խնդիրը. որովհետեւ գերեզմանատան մէջ անգամ հարուստ եւ աղքատ դասակարգերու այդ խորութիւնը մեծ վիշտ պատճառած է հոգիներու այցաբնին մէջ. այս պատճառաւ հոս յեղափոխական խլրտում մը սկսած է՝ որ երթալով ծանր կերպարանք մը ստանալու վերայ է. գրգռեալ հոգիներ կ'ըսեն թէ իրենց խօսուած եղած է որ մահուանէ վերջ ամեն ոք հաւասար է, եւ այժմ գերեզմանատան մէջ եղած այս խտրութիւնը սրբապղծութիւն կը նկատեն եւ ետ կը պահանջեն իրենց մարմինները, աւելի խղճամիտ անձանց յանձնելու համար անոնց պահպանութիւնը:

Գերեզմանատան մէջ եղած այս խտրութիւնը իրեն աւելի ծանր հետեւանքները կրնայ ունենալ. ազատելու համար կղերին ձեռքէն ու գերեզմանատան խնդրէն՝ Եգիպտոսի մէջ կայ մտադրութիւն մը, որ է քաղաքային թաղման եւ դիակիզութեան սովորութիւնը ընդունիլ. կը տեսնէ՞ք թէ գործը սինչու ո՛ւր կրնայ յանգիլ եթէ այժմէն անոր դարմանին վերայ չի խորհինք:

—Սրբազանը ի՞նչ միջոցներ մտադիր է ձեռք առնել՝ վերջ մը աալու համար այս անօրինակ անհաւասարութեան խնդրոյն:

—Մարմինայի խնդիրը, ինչպէս գիտէք, զուտ կրօնական խնդիր մ'է. այդ մասին Գննիչ Յանձնաժողով մը կազմուած է ընդ նախագահութեամբ Թաղէոս առաքեալի Յանձնաժողովը երէկ իւր ներկայութեանը կանչեց Եգիպտոսի նախկին առաջնորդ Գարբիէլ Եպիսկոպոսը կարգ մը բերա-

նայի տեղեկութիւններ անուելու համար անկից: Յանձնաժողովը տակաւին իւր քննութեանց արդիւնքը տեղեկագրած չէ. առ այժմ ձեզ սաչափ ըսեմ թէ՛ եթէ հարկ լինի վերջին դատաստանին խիստօրէն պիտի դատուին ամէն անոնք՝ որք մարմինայի այս գործոյն մէջ յանցաւոր կամ մեղսակից եղած են. աւելորդ է ըսել թէ վերջին դատաստանը ո՞րքան անաւոր է:

—Սրբազանը ըսաւ թէ կարգ մը խնդիրներ կան. կը թոյլատրէ՞ ինձ հարցունելու թէ որոնք են միւս խնդիրները:

—Կայ նաեւ վարչական գործոց մասին կարգ մը խնդիրներ. անոնց քննութեամբը այժմ կ'ընթացի, այնպէս որ եթէ տեսնեմ թէ ստուգիչ կան անկանոնութիւններ, այն ատեն ապաշխիւներու եւ այլ գործոց տեսչութիւնը եւ շահագործումը պիտի յանձնեմ Անանուս ընկերութեան մը (Société Anonyme pour l'exploitation des ABA-DIES du Patriarcat*), ի՞նչ ալ երկայն անուն). ընկերութիւնը պիտի լինի 25 կամ 50 տարուան տեսչութեան մը համար, եւ բաժնիներու (actions) վերայ պիտի կազմուի:

—Սրբազանը ի՞նչ մտադիր է ընել եթէ Առաջնորդարանի վարիչ մարմնոյն կողմանէ դիմադրութիւն լինի իրեն:

—Եթէ տեսնեմ թէ ազգային գործոց մատակարարութեանը մէջ զեղծումներ կը գործուին, այդ պարագային՝ նախ ժողովոյ վերջնագիր մը (ultimatum) պիտի ղրկեմ, եւ այն ատեն եթէ 48 ժամուան մէջ գոհացուցիչ պատասխան մը չ'ստանամ՝ բոլորն ալ քաւարան պիտի ղրկեմ. այս է ամենէն կտրուկ միջոցը . . .

Այս տեսակցութեան քիչ վերջ կը մեկնէի. մեկնած պահուստ՝ Ալէաթճեան Սրբազան քովս մօտենալով ըսաւ. «Թէ ինչո՞ւ Ալէաթճեան այս պահուստ փոխանակ վան, Մուշ եւ կամ ի Սիս լինելու հոս կը գտնուի. եթէ գիտնային պատճառը «մեր Գահիրէքանակ ազգայինք» «յիշուի չի յիշուի» խնդիրը ինքնին լուծուած կը լինէր»:

Երբ հոգիներու քաղքէն ձամբայ կ'եկնէի՝ խորապէս զգածեալ Սրբազանին հետ ունեցած տեսակցութեանէս, Լոստոնէ եւ Բարիզէ քաջուած զոյգ մը հեռագիրներ սթափեցուցին զիս. հեռագիրք կը հաղորդէին թէ Եւրոպայի պօրտաներուն մէջ Մարմինայի զոյգերու բաժնի արժէթը լինելը (obligation) A. B. Serie Unifié մեծ անկում կը բաժնի իրենց գիներուն մէջ. 150 ֆր.էն 131ի իջած է. անկումը կը շարունակուի. անկման պատճառ կը նկատուի հոգիներու յեղափոխական շարժումը, որ կը պահանջէ հաւասար թաղում վերջին հանգստարանին մէջ:

ՅՄԲ. Լ. Ս. ՇԱՄԼԸՆԱՆ

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Գահիրէի Հայոցնորահաստատ Որբասիրաց ընկերութեան առժամային Գործադիր Ժողովը՝ ընկերութեան անդամներուն թիւը բազմացնելու եւ նոր զարկ մը տալու համար, վերջերս մասնաւոր հրաւիրագրերով կոչում կ'ընէր Գահիրէի Հայոց ազգասիրական եւ մարդասիրական զգացմանց:

Ուրախ ենք ըսել թէ Առժ. Գործ. Ժողովոյ այդ ձեռնարկը իւր արդիւնքը ունեցած է եւ անդամաց թիւը բաւական ըստուարացած:

Հիմակ ալ նոյն Գործ. Ժողովը մասնաւոր նամակաւ մը յիշեալ հրաւիրագրերէն օրինակ մը ղրկելով մեզ՝ ընդհանուր հրաւեր մը կը կարգայ տեղացի ամէն դասակարգի ազգայնաց, որպէս զի ամէն ոք բա-

(*) Պատրիարքարանի ապաշխիւներուն շահագործման Անանուս ընկերութիւն

րեսիրաբար անդամակցի, որով աւելի ուժ եւ մղում մը պիտի արուի սոյն նորահաստատ ընկերութեան:

Եղած ձեռնարկը ա՛յնչպի մարդասիրական զգացման մօտ եւ ինքնին ա՛յնչպի բարենպատակ է որ մենք մեր կողմէն բառ մ'իսկ աւելցնել աւելորդ կը համարինք եղած հրաւերին վրայ եւ միայն կը բաւականանանք ի ստորեւ հրատարակելով զրկուած հրաւիրագրին պատճէնը:

Հ Ր Ա Ի Է Ր

ԱՌ ԲԱՐԵՐԱՐ ԱԶԳԱՅԻՆՍ

Ազնիւ Տիար,

«Ինչպէս յայտնի է, աշխարհածանօթ դէպքերու հետեւանքով, ի միջի այլոց Արաբկիր գաւառին մէջ իբր հազար հինգ հարիւր հայ մանուկներ որբացան եւ անտէր ու անպաշտպան մնացին, նշաւակ ամէն տեսակ զրկանաց եւ փորճութեանց:

«Այդ դժբաղդներուն ի նպաստ ցարդ միակ նշանակելի տեսական օգնութիւնն եղած է Ռօտոսդոցի ազնիւ ազգայիններու մարդասիրական ձեռնարկն՝ որով որբանոց մը հաստատուած է Արաբկիր, տեղւոյն Հայոց Առաջնորդարանի հսկողութեան տակ:

«Սակայն, այդ որբանոցն պատասխարուող որբուկներու թիւը միայն 32 է՝ եւ դեռ այսօր հարիւրներով կը համբուրն երկսեռ որբեր, զրկուած ամէն բանէ ու մատնուած կօրստեան վտանգին՝ եթէ օգնութեան ձեռք չկարկառուի իրենց անյապազ:

«Ահաւասիկ բաղդի այս անժառանգներուն մեր նիւթական միջոցներու ներած չափով մտաւորական ու բարոյական մտունդ մատակարարելու համար, տարւոյս Մայիս 1 ին կազմուած է Ընկերութիւնս, որ ունի իր կանոնագիրն եւ որ ընտրած է Ընդհ. Ժողովոյ առժամայ Գործադիր Ժողովս:

«Արդ, Պատ. Ընդհ. Ժողովոյ որոշման համեմատ կը փութանք ի պաշտօնէ աւետել Ձեզ Ընկերութեանս կազմութիւնը, որուն կանոնագրի տպեալ մի օրինակը պիտի ըստանաք մտաւորապէս:

«Ձերմ կոչում ընելով Ձեր ազգասիրական զգացմանց եւ յայտնելով Ձեզ թէ՛ իբր մէկ ամիսէն տեղի պիտի ունենայ Ընդհ. Ժողովոյ Գործադիր Ժողովոյ վերջնական ընտրութիւնները, լիայոյս ենք թէ պիտի բարեհաճէք անդամակցիլ Ընկերութեանս, որուն համար Ձեր մասնակցութեան նիւթական եւ բարոյական օգուտները խիստ գնահատելի են ներկայ պարագաներու մէջ:

«Աստուծոյ եւ մարդկանց հաճելի գործ մ'ըլլալէ աւելի՝ մեծ եւ նուիրական պարտք մ'է այս, զոր հաւատացէ՛ք, անչան զոհողութեամբ՝ այսինքն բաժանորդագրուելով կամ մասնաւոր նուէրով մը կատարած պիտի ըլլաք:

«Հաճեցէ՛ք, Ազնիւ Տիար, ընդունիլ այս առթիւներ կանխանուէր եւ ջերմ շնորհակալեաց հետ՝ մեր խորին յարգանաց հաւատովն:»

Ի դիմաց առժամայ Գործ, Ժողովոյ Գահիրէի Հայոց Որբասիրաց Ընկերութեան

Ասեմագլիք ԱՊԱՀ ՊԵՏՐՈՍԵԱՆ Ասեմագլիք Ս. ՕՏԱՊԱՇԵԱՆ

Յ. Գ. — Ընկերութեան առժամայ գանձապետն է Բարեգործական Ընկ. Տնօրէն Տ. Լեւոնդ Ս. Միրիճանեան, որուն կարող էք ձեր վճարումը ընել ի պահանջել հարկին:

Լահէի Խաղաղութեան Համաժողովին գիմուսներ ընելու նպատակաւ Այլ քառնգրիոյ մէջ գումարուած Միթիւնիկին առթիւ տեղի ունեցած հանգանակութեան հետեւեալ հաշուեցուցակը զրկուած է մեզ ի հըրատարակութիւն:

Հ Ա Շ Ո Ւ Ե Յ Ո Յ Յ

ՏԵՂԻՈՅՍ ՄԻԹԻՆԿԻՆ ԱՌԹԻԻ ԵՂԱՍ ԾԱԽՈՒՅ

Մ Ո Ւ Տ Ք

Եկեղեցւոյ պնակի հասոյթ 761 1)2 դհկ. ողջ. Յ. Մ. Հ. Չ. Ս. և Ս. Պ. մէյմէկ անպլ. ոսկիէն՝ 390, Ո՛ն 50, Ո՛ն 40, Ա. Չ. Ո՛ն Պաթ, Ո՛մանք՝ 30ականէն՝ 90, Գ. Շ. Ո՛ն 20ականէն՝ 40, Բար, Լ. Յ. Ե. պոյսճեան, Թաղէ, Լ. Ն. և Պ. 10ականէն՝ 60, Մ. Բ. Գոնչ, Օ. Թ. Սկիւտարցի՝ 5ականէն՝ 25, բաց մնացածը գոցելու համար՝ Գ. 97 1)2 և Հայ մը՝ 70 1)2: Համագումար մուտքին՝ 1624 1)2 դահեկան ողջ:

Ե Լ Ք

Հեռագիրներ՝ Լահէի Համաժողովին 182 դհկ. ողջ. Ամերիկայի Մ. Ն. Նախարարին՝ 304 1)2, Ռուսիոյ Արտ. Գ. Նախարարութեան՝ 207.90, Անգլիոյ՝ 189.80, Գերմանիոյ՝ 178.20, Ֆրանսայի 172.80, Աւստրիոյ՝ 170.10, Իտալիոյ՝ 148.50, Համաժողովին, Մեծ Պետութեանց և Եւրոպական մամուլին ուղղուած յիշատակագրերու և նամակներու ծախք՝ 71, Համագումար ելքին՝ 1624 1)2 դահեկան ողջ:

ՄԻԹԻՆԿԻ ԿԱՐԳԱԴԻՐ ՅԱՇՅԱԽՈՒՅ

Ա Չ Դ

Նորակազմ՝ Երկուսն Այգրատարնամ Ընկերութեան համար հաւաքի մը պէտք կայ: Ամեն անոնք որք կը փափաքին սոյն պաշտօնը ստանձնել, հաճին յառաջիկայ երկուշաբթի (16 հոկտ.) ժամը 7 1/2ին (Ը.Ե.) ներկայանալ Ընկերութեան Գործ. Ժողովոյ գրասենեակը (Եկեղեցւոյ չըջափակին մէջ):

Ի Դիմաց Գործադիր Ժողովոյ

Ասեմագայի

Ասեմապետ

Ե. ԲԻՐԷՍԵՏՃԵԱՆ

ՏՐ. Գ. Փ. ԷՎԼԵԱՆ

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

ՎԵՐՋՆԱԳԻՐ.—Անտարակուսելի է թէ Թրանսվալի կառավարութիւնը վերջնագրով մը պատասխանած է անգղիական վերջին յաւակնութեանց:

Այդ վերջնագրոյն մէջ Թրանսվալի կ'իմացնէր Անգղիացւոյ թէ թշնամութիւն պիտի նկատէր նոր զօրքերու իւր սահմանազրուիններուն վրայ առաքումն և ըստ այնմ ալ պիտի վարուէր:

Սուտ պիտի լինէր ըսելը թէ՛ այդ վերջնագիրն ընդունուած չէ: Կ'ուզեն անգղիական ժողովուրդին հաւատացնել թէ Պօէրները պատերազմն սկսած են առանց զայն յայտարարելու, թէ իբրև առաջակներ շարժած են ձէմաքնի նման: Արդ՝ մենք հաստատապէս գիտենք թէ մի քանի եւրոպական պետութիւններ Գրիւկէր նախագահին հեռագիրն ստացած են և թէ Պրուքսէլի Տ.Քթ. Լէյարը, մասնաւոր հեռագիր մը առած է Թրանսվալի որոշմունքին նկատմամբ:

Ահաւասիկ Թրանսվալի զրկած վերջնագիրը:

«Ի՞նչ քառասուն և ութը ժամուան մէջ հրաման չարուի Թրանսվալի արևելեան և արևմտեան սահմանազրուինները համախառնած անգղիական զօրազուեղերուն այդ տեղերէն հեռանալու, այդ մերժումը իբր թշնամութեան գործ մը պիտի նկատուի»:

—Անգղիական թերթերը այդ վերջնագիրը՝ խիստ խրոխտ և ամբարտաւան ածականներով կ'որակեն:

Թրանսվալի վերջնագրին տրուած պատասխանը պաշտօնապէս հրատարակուած է Ի Լօնտօն: Բրիտանական կառավարութիւնը ցաւ կը յայտնէ որ Թրանսվալի այնպիսի վճռողական պահանջներ ըրած է, որոնք ամէն վիճարանութիւն անկարելի կ'ընեն:

—Գրիւկէր նախագահը Միացեալ Նահանգ գտնուող իւր բարեկամներուն հոկտ. 12 թուականու քաշած հեռագրին մէջ կ'ըսէ թէ Հարաւ-Ափրիկեան հասարակագետութիւնները, եթէ երբէք պարտաւորին Անգլիոյ հպատակիլ, հաստատ որոշած են իրենց անկախութիւնը այնպէս սուղ փոխարինել որ մարդկութիւնը քստմնի:

—Թրանսվալի դեսպանատան քարտուղարն ի Փարիզ՝ Արտաքին Գործոց նախարար Պ. Տէլքասէի ծանուցած է թէ Անգլիոյ և Թրանսվալի միջև պատերազմը ծագած է:

—Լօնտօն հասած հեռագիր մը կ'ըսէ թէ Պօէրները ամսոյս 12ին Ինկոկո և Լանկո Նեյ գրաւած են և մեծ բազմութեամբ նախալ կ'արշաւեն:

Կ'ըսուի թէ նախալի կողմէն դիմադրութիւնը լաւ կազմակերպուած է:

—Բրիտանական զօրքերը առ այժմ պաշտպանողական ընթացք մը պիտի բռնեն:

Ա Ր Յ Ո Ւ Ն Ք

Արցունքը՝ արտասուելին գեղձերու միջոցաւ արտադրեալ արբալային հեղուկ մ'է, որ մասնաւոր խողովակներու միջոցաւ կը թափի աչաց անկեան վերի կողմն:

Table with 2 columns: Name and Amount. Includes items like Իւր քիմիական բազաքրութիւններն են, Գլորալս օմ սոսիլս, և հանգստից 1.30, աղերու հեթեր 0.50, Բնասպիսային ճիւքեր 98.20, Ջուր 100.

Ամեն անգամ որ մարդ կը գոցէ իւր աչքերն, աչաց մակերեսոյթն կ'ողողի այս բազաքրեալ հեղուկէն որով և կը սխալուին կոպերու ներքին հուզաթաղանթի աչաց վրայ ըրած շփումն:

Եթէ կոպերու եզերքը գտնուած ճարպային արտադրութիւնը չ'լինէր արտասուք դուրս պիտի թափէին աչքերէն, սակայն այս ճարպային նիւթը կ'արգելու արցունքի դուրս հոսելն. ըստ ուրում աչքերու ներքին անկիւնը գտնուող մի քանի ծակերու միջոցաւ արցունքը կ'ստիպուի հաւաքուիլ արտասուաց փամփուշտին մէջ և այս միջերուած արցունքի աւելորդ մասը ռեզային մասնաւոր խողովակներու միջոցաւ քթին մէջ հոսելով հոն գտնուած հուզաթաղանթի հետ կը կազմէ խլիմքն:

Երբ սաստիկ վիշտ մը, ուրախութիւն մը, բարկութիւն մը և կամ ցաւ մը կ'ունենանք, այն ատեն արտասուական գեղձերն զբոստելով արցունք կ'արտադրեն սովորականէն շատ աւելի առատութեամբ, և որովհետև այդ պարագային

թթային խողովակներու նեղ անցքերն անբաւական կը գտնուին արցունքի այս առատ արտադրութիւնը յթիւն մէջ առաջնորդելու, ուստի արցունքն աչքերէն դուրս գալով կը վազէ այտերն ի վար, և ստոր կ'ըսենք լալ կամ արտասուել:

Ընդհանրութեան մէջ տիրող կարծիքն առ հասարակ այն է թէ՛ լալն կամ արտասուելն պատահական է, լալն մը՝ որ հիմնովին սխալ է: Արտասուելն շարունակական է, միայն թէ լացած միջոցին արտասուական գեղձերու արտադրութեան չափազանց առատութիւն մը յառաջ կու գայ:

Արցունքը ունի իւր բազմազան օգուտները.

1. Արցունքն՝ ո՛չ միայն կ'ողողէ աչքն և փայլ կուտայ անոնց՝ այլ և կ'արգելու աչաց մէջ գտնուած եղջերային թաղանթի չորնալն և ուրիշ հեղանիթերու շոգիացումն:

2. Արցունքն յաճախ մեր ամենալաւ սփոփանքն է մեր խորին վիշտերու և տխրութեան մէջ: Անոնք՝ որ դառն վիշտերու և ցաւերու մէջ անկարող կը լինին լալու, առաւել ենթակայ են խելագարութեան քան թէ անոնք, որոց արտասուաց կաթիլներն զերբութեամբ կը հոսին իրենց այտերն ի վար:

Ապաքէն խելագարութեան հետաքրքրական հանգամանքներէն մին է, ինչպէս փորձերով տեսնուած է յիմարանոցներու մէջ, առհասարակ արտասուաց կատարեալ քայքայութիւնը: Ինչ որ ալ լինի խելագարութեան սկսակին, արտասուաց բացակայութիւնը ակներեւ է, ինչպէս մոլեգլին յուզմանց և խորին մեղամարտութեանց մէջ՝ նոյնպէս ալ նաեւ խելագարութեան ծայրայեղ անզգայութեանց մէջ: Երբ յիմարանոցներու մէջ գտնուի այնպիսի մէկը՝ որ սկսած լինի արտասուաց կաթիլներով թրջել իւր այտերն, այդ նշան մ'է թէ խելձ գոհն սկսած է ապաքինութեան սահմանին մէջ մտնել՝ և կամ լուսնոտ մ'է զոր հազիւ կըրնանք ստուգապէս խելագար համարել: Կը թուի թէ խելագարները գործնականապէս զուրկ են լալու կարողութենէն:

3. Արցունքը արտայայտութիւն մ'է նաեւ զանազան յուզմանց, գորովոյ և կամ բարկութեան: Երբ ուշադրութեամբ ի նկատի առնենք այն յուզումները որ բնագիտց կ'արտայայտուին արտասուաց մէջ, պիտի տեսնենք որ այն բուն յուզմանց և զգացմանց անարժան շարժարկներէն մին է բարկութիւնը՝ որ անկարելի կ'ընէ չնոսիլ մեր աչքերէն արտասուաց հեղեղները: Մարդկային կենաց բոլոր ընթացքին մէջ թերեւս չ'կայ բարկութեան անելի ուրիշ անարժան պատճառ մը, որ զմարդ շարժէ յարտասուու եւ այս կ'սկսի կենաց կանխագոյն հասակին, մանկութեան օրերուն մէջ՝ երբ բնաորութիւնը դեռ սկսար են. և կը դադրի բարկութենէ լալու սովորութիւնը չափահասութեան վիճակին մէջ՝ երբ բնաորութիւնը տակաւ կ'սկսի զօրանալ և զարգանալ:

4. Արցունքը արտայայտութիւն է նոյնպէս խորին համակրանաց ընդ վշտակիրս: Երբ կը տեսնենք մեր ամենէն սիրելի բարեկամները և ազգականները ամենախոր վիշտերու և ցաւերու մէջ, և կամ մեր ամենէն նուիրական սիրելեաց մահը կ'ունենանք մեր աչաց առջև, այն ատեն մեր համակրական ջիղերու զբոսումը՝ կը զբոսուի նաեւ արտասուական գեղձերն որով և մարդիկ կը փղձկին յարտասուու: Այս կարգի արցունք կը կոչուի արտասուք գթոյ և գորովոյ, սիրոյ և համակրանաց, զգացմանց և վշտակրութեանց: Այս կարգէն էր արցունքն կամ լացն այն քանի մը տասնակ հազար հայ որբերու ու որբուհիներու՝ որոնք հայկական շարքերու առթիւ կորուսին իրենց հայրերն ու մայրերն, եղբայրներն ու քոյրերն:

5. Արցունքը մերթ եւս արտայայտութիւն մ'է ապագային մէջ տեղի ունենալիք պատահարներու մասին, զոր օրինակ՝ իւր հայրենեաց ազատութեան համար պատերազմի դաշուր գացող զինուոր մը և կամ իւր դաստիարակութեան համար հեռու մարտարան մը գացող պատանի մը երբ կը բաժնուին իրենց խանդակաթ ծնողներէն ու սիրելիներէն, երկուստեք յուզուելով՝ կ'սկսին իրենց այտերն ի վար կաթիլթիլ տաք արցունքը:

ՏՐ. Ա. Ս. ՅԱԿՈԲՅԱՆ

ՆԱՄԱԿԱՏՈՒՓ

ԱՂԵՔԱՆԴՐԻՍ, Գործակալութիւն. — Ստացանք ձեր 11 հոկտ. թուակիրն եւ ներքակեալ մանսա բօքքը:
Վ. ս. Ս. Պ. Բ. — Տեար Զ. Ս. ձեր տարեկան բաժանորդակնը միզ յանձնեց:
Տեարք Մ. Գ. Վ. Ս. Եղբ. Կ. Յ. Գ. — Ձեր վճարումներն ստացուած է:
Տ. Բ. — Մինչեւ վերջին թիւը առանց պակասի ղրկուեցաւ ձեր հասցէին:
Մ. Բ. — Այցեքարտը ստացանք:
Ձեր թիւերը այսօրէն սկսեալ մեր քով կը պահենք, մինչեւ որ ձեր հասցէն ծանուցանէք մեզ:
Ձեր յանձնարարած տեղէն ստանալով տարեկան բաժանորդագիրը, ստացականը անոր յանձնեցինք:

ՄԱՐՏԻՐՈՍ ՄԱՐԶՊԱՆԵԱՆ
ԼՈՒԱՅԱՐԱՐ ԵՒ ԱՐԴՈՒԿԻԶ

Իւր գործատեղին հաստատած է Սպտինի պալատին ճիշդ գիմացի փողոցը, Ծարաէլ-Պօսթան թիւ 7 տան մէջ:
Ամենէն դժուարահաճներն անգամ դահայները պայմանաւ կ'արգուկէ չապիկներ ե այն ամեն զգեստեղէններն, որոց համար արգուկի պէտքը կ'զգայուի:
Ասոնցմէ զատ ունի նաեւ լուացարարութեան յատուկ ճիւղ մը, ուր իրեն դիմող յաճախորդներուն ճերմակեղէններն զատ զատ լուալու գոյեղի դրութիւնը հաստատած է:
Յաճախորդներուն դիւրութիւն ընծայելու նպատակաւ ճերմակեղէններն ինք անձամբ պիտի առնէ տուներէն ե պիտի վերադարձունէ որոշեալ ժամանակին:
ԳԻՆԵՐԸ ԶԱՓԱՒՈՐ ԵՒ ԳԻՒՐԱՄԱՏՁԵԼԻ
1-8

ՀԱՅԿԱԶԵԱՆ ՓՈՒՈ

Օոօգի Պաֆ վաճառատան մօտերը, Կամե-էլ-Պեմաքի ճիւղ գիմացը

ԵԿԱՒՕՑ ԵՒ ԸՆԿ

Պատիւ ունին յայտարարելու թէ, վերջերս իրենց նոր բացած փուռին մէջ, անխարդախ ալիւրէ կը պատրաստուի ԳԱՂՂԻԱԿԱՆ, ԱՆԳՂԻԱԿԱՆ, ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԵՒ ՅՈՒՆԱԿԱՆ հացեր: Սուրճի, թէյի եւ կաթի պարսիմաթներ, եւ այլն:
Եկաւօք եւ Ընկերութիւն մեծ ջանք եւ հոգածութիւն պիտի ունենան իրենց դիմող բոլոր յաճախորդներն ըստ ամենայնի գոհացնելու:
Յանձնարարութիւնք ամենայն ճշգրութեամբ եւ փութով կը կատարուին:
6-50

ՏԻԿԻՆ ՄԱՐԻ ՊՕՂՈՍ
ՄԱՆԿԱԲԱՐՁ

Վկայեալ տեղական կառավարութեան եւ բժեկական վարժարանէն
Իւր բնակութիւնը հաստատած է Եւրա Ապա-իւլ-Ազիզ, Այի փաշա Եէրիֆի պարսիզին գիմաց:
Երկար ժամանակ իւր արհեստին կիրարկութեամբ ստացած փորձառութիւնը եւ տեղական կլիմայի պահանջներուն մասին ունեցած գիտակցութիւնը կարեւոր առաւելութիւններ են:
Իրեն դիմողները կատարելապէս զո՞ պիտի ման:
9-24

ԼԵՒՈՆ ԿԻՄԻՒՇԵԱՆ

ՎԱՃԱՌԱՏՈՒՆ ԱՄԵՆ ՏԵՍԱԿ ԵՄԱՅՈՅՅՆԵՐՈՒ
ՏՕՆՕԿՐԱԾ
Գ.Ա.ՆՈՐԷ, — Մուսի փողոց, — Գ.Ա.ՆՈՐԷ:
Ս. Ե. Ս. Սեմալիի վաճառատան գիմաց

Վերջերս հաստատած իւր վաճառատան մէջ կը գտնուի պատի եւ քօնսօլի ընտիր տեսակէ բանտիւններու մեծ մթերք:
ԳԻՄԵՅՅԷՔ ՀՈՆ եւ պիտի գտնէք ամէն ճաշակի յարմար զանազան տեսակ արանց եւ կանանց ժամացոյցներ, աղամանազարդ, ոսկի, արծաթ եւ ճիւղ:
Յրանսական եւ ամբիկեան ապրանսայամենարնտիր տեսակներէն զարդեղէններ, օթքաներ, օղեր, մասանիներ եւ այլն:
Ամէն տեսակ ժամացոյցներու նորոգութիւն կը լինի, արհեստին կատարելագործութիւններուն ծանօթ ժամագործի մը միջոցաւ:
ԳԻՆԵՐԸ ԽԻՍՏ ԶԱՓԱՒՈՐ
22-50

ՏՕՐՕՐ ԺՕՐԺ Փ. ԷՎԼԻԵԱՆ
ԱՄԵՐԻԿԵԱՆ ԱՏԱՄԱՐՈՅԺ
Ապսին, Շարէ Քուպրի, թիւ 55

Կը պատրաստէ ամեն բերաններու եւ հասակի յարմար ընտիր ապրանքներով կեղծ աղաններ:
Կը դադարեցնէ վայրկենապէս ալուայի ցաւերը ամբիկեան նորագոյն մեթոտով իւր պատրաստած դեղերով:
Կը բուժէ լինտերու եւ բերնի ամեն տեսակ հիւանդութիւններն:
Իր լեցուցած աղաններուն տոկունութիւնն առ նուազն երկու տարուան համար կ'երայխաւորէ:
3 1-10

ՅԱՐՈՒԹԻՒՆ ԼԱԶԱՐԵԱՆ
ԱՊՏԻՆ ԿՈՇԿԱԿԱՐ ԱՊՏԻՆ
Տայիթի Սանիթի ճիւղ գիմաց

Ամենաընտիր ապրանքներէ կը պատրաստէ խիստ կոկիկ, հաստատուն եւ ճաշակաւոր կոշիկներ, արանց, կանանց եւ տղայոց համար:
Գինեքը չափաւոր եւ աժան:
Փորձ մը միայնկը բաւէ:
14-24

ՏՊԱՐԱՆ-ԿԱԶՄԱՏՈՒՆ ԵՒ ԹՂԹԱՎԱՃԱՄԱՏՈՒՆ
Ի Գ.Ա.ՆՈՐԷ
ՇԱՐԱ ՄՕԶԱՄԷՏ ԱԼԻ (ՀԱՊՊԱՆԻՅԷ)

Ս. ԴԱՐԲԻՆԵԱՆ պատիւ ունի յայտարարելու թէ, յետ այսու ամէն օր առաւօտեան ժամը 7 էն մինչեւ երեկոյեան ժամը 8 ը, պիտի գտնուի իւր Տպարանին մէջ եւ պիտի ընդունի ամէն լեզուէ սպագրական ամեն կարգի եւ տեսակի յանձնարարութիւններ: Ինչպէս՝
Երջարեականներ, Մահազդեր, Հրախաւարեր, Այցեխարեր, Յանկեր, Գիրքեր, տեղեկագրեր, Հաշուեցոյցներ, Կանոնագրեր, Տոմար, Ընկերութեանց եւ վաճառականներու սպագրական ամեն պիտոյցներ:
Իւր տպարանին մէջ եղած նորանոր կարգադրութեանց շնորհիւ կը խոստանայ յաճախորդները ըստ ամենայնի գոհացնել գործերու մտքութեան, ճշգրտագնութեան եւ գներու չափաւորութեան մէջ:
Եզրպտոսի ո ե է քաղաքէն կամ գիւղէն եկած յանձնարարութիւնները ամենայն խնամօք եւ փութով կը կատարուին:
Տպագրութիւն Ա. Ա. ԴԱՐԲԻՆԵԱՆ
Le Gérant Dr B. A. HAGOPIAN

ԳՐԻԳՈՐ ՊԵՇԻՐԵԱՆ

ԿՈՇԿԱԿԱՐ
Պագար Մուսուր Թիւ 39

Պատիւ ունի ծանուցանել թէ, իւր խմբու թը Շարա Միւզէյինէն փոխադրած է Ի Պագար Մուսուրու: Յրանսական նորաձեւութեանց յար եւ նրման կոշիկներ պատրաստելու մէջ իւր ունեցած հմտութեամբը մինչեւ ցարդ գոհ բրած է իրեն դիմող Պատ. յաճախորդներն:
Իւր գործածած ապրանքներու տոկունութիւնն կը բէք տարակոյս չ'վերցնեն:
Իրեն եղած յանձնարարութիւնք ո'չ միայն չափաւոր գներով, այլ եւ փութով եւ մեծ խնամով կը պատրաստուին:
Գինեքը, եթէ կ'ուզէք ճաշակաւոր հագնիլ եւ կոշտերէ (նասըր) ազատ մնալ:
17-24

Հ. ԱԶԱՏԵԱՆ

ՂՈՒՐՐԻԷ, ՎԷՔԱԼԷԹ-ԷԼ-ԱՍԱՊԻ ԿԻՑ

Կը ծախուի ընտիր տեսակէն մազի ներկ (բասուրգ) սեւ, շագանակագոյն եւ ոսկեգոյն:
Սեւ ներկ չիշով վայրկենապէս սեւցնող Սոյն ներկերու տեւողութիւնը մէկ ու կէս ամսուայ համար երայխաւորեալ է:
ՀՐԱՇԱԼԻ ԶՈՒՐ ՄԸ
Հերթափութիւնը կը դադարեցնէ եւ մազերը կը ճոխացնէ: Նմանապէս ճաղատ (տազ) գլուխները մազ կը բերէ: 17 տարուան ճաղատ գլուխներու վրայ փորձուած եւ հիւնալի արդիւնք տեսնուած է: Ե՛րջը 8 ղըշող (2 ֆրանք):
Ճերմկցնող շուր չիշով, որը մարմնոյն բնական սպիտակութիւն կուտայ առանց զգացնելու: Եզրպտոսի մէջ միակը:
Ակուայի փոշի եւ շուր. մին մաքուր եւ ճերմակ, միւսը հիւանդութիւններէ զերծ պահող եւ ամրացնող:
Թող փութան օգտուիլ այն անձինք՝ որոնց գլխու մազերն սկսած են տակաւ առ տակաւ թափիլ եւ օր մը ճաղատ ըլլալու վտանգին ենթարկուած են:
Կը դնենք, կը վաճառենք եւ կը փոխանակենք բոլոր ազգաց գործածած նամակադրոշմները:
3 2-8